



Հայաստանի ավելացված արժեքի հարկի ներկայիս օրենսդրական և վարչական խնդիրները

Արմեն Ալավերդյան, Վահե Բալայան

Համառոտագիր

Սույն հոդվածում ներկայացված են անցումային փուլում գտնվող երկրներում, մասնավորապես Հայաստանում գործող ավելացված արժեքի հարկին (ԱԱՀ) վերաբերող ներկայիս օրենսդրական և վարչական հիմնախնդիրները: Հեղինակների կողմից տրվել է Հայաստանում գործող ԱԱՀ համակարգի կառուցվածքի և կիրառման ընդհանուր նկարագրությունը, ներկայացվել են տվյալ դաշտում առկա խնդիրները, ԱԱՀ-ի հետ կապված քաղաքական, սոցիալական և տնտեսական հետևանքների քննարկումները և նշված խնդիրների լուծման ուղիները: Տվյալ հոդվածում ներկայացված տեսակետները պատկանում են միայն հեղինակներին և չեն արտացոլում Հայաստանի կառավարության կամ Հայաստանի պետական հարկային ծառայության պաշտոնական տեսակետը: